



Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

Ե

ԴԱՐ ՄԸ ԻՐ ԵՐԿՈՒՆՔԻՆ ՄԵԶ

1. ԴԱՎԱՆԱԿԱՆ ՎԵՃԵՐԸ ԿԲԱՆԱՆ ԴԱՐԸ

Ամոթով էինք դագաղը դրեր տագնապի դարը. զայն փակեր էինք դժբախտ պահու մը, երբ դավանական վեճերը իրենց ամենն ամենի փուզն էին մտեր, շատ մը սկ էջել ավելցնելու համար հայոց պատմության արդեն մոայլ շրջանին մեջ:

Մարդ կամչնա երրոր կրանա հիմա նաև այս դարը: Հոգերը զորս իր նախորդեն ժառանգած է ան, կշարունակեն դեռ խոռվել Պոլիսը, և միշտ դավանական վեճերն են անոնց կորիզը: Հոտմն ու իր գործակաները աշխույժ են առավել քան երրեք. եթե շնաշողեցան Հայ Եկեղեցին ծունկի բերել անցյալ դարուն, հիմա զայն ճեղքելու փորձը կընեն, իրենց բովանդակ ուժերը լարած:

Դարը, զոր կթևակոխենք, սփոփիչ պահեր ալ բազմից արձանագրած է անշուշտ: Հակառակ ալեկոծությանց, որոնք անպակաս եղած են իր ծոցեն, հայ ժողովուրդը բացառիկ ճիգեր ալ փորձած է այս դարուն և իրեն համար երկունքի դար մը եղած է ան: Եվ այնուամենայնիվ դավանական վեճերը եկած

* Շարունակված Շշմիածին» ամսագրի 1962 թվականի № թ-ից, Ժթ-ից, 1963 թվականի № թ-ից, Բ-ից, Գ-ից, Դ-ից, Ե-ից, Զ-ից, Է-Ը-ից, Թ-Ժ-ից, ՓԱ-ից, ԺԲ-ից և 1964 թվականի № Ա-ից և Դ-ից:

են ամլացնել այդ ճիգերեն շատերը և անդադար խոռված երկունքի այդ դարը: Շատ ավելի արգասարեր կրլար հայ ժողովուրդի փորձած վերելքը, եթե ան ստիպված շըլլար սերունդներ մսիսել ունայն վեճերու համար, և անոնց աշքերուն ու մտքին լույսը շքամեր սնութի մարդանքներու սիրուցն:

Այնպես որ դավանական կոիվներով ստիպված ենք բանալ նաև այս դարը: Կաթոլիկ քարոզության ամենն հանդուգն փորձերուն շրջանն ենք հասած, երբ կաթոլիկ գործակալները այլևս սկսած են խտիր շղնել միջոցներու միջև: Անցնող դարուն անոնց բովանդակ ճիգը կայացեր էր հայ հոգևորականությունը որսալու և Հայ Եկեղեցին ներսեն պառակտելու իրենց փորձերուն մեջ: Հիմա արդեն դանդաղածներու մեջ թափանցելու, հայ ժողովուրդը ներսեն ճեղքելու շրջանն է: Նախորդ դարու փորձերը աղետ բերին հայ ժողովուրդին: Բարիք չէին կրնար խոստանալ նորերը ևս:

Մեր կսկիծը ավելի խոր կդառնա, քանի մոտենանք մեր իսկ օրերուն: Կիրքն ու ատելությունը շարունակված կգտնենք ավելի նոր սերունդներու օրով ալ, երբ հայ ժողովուրդի շատ ավելի գերագույն շահերը պետք է վաղուց լուեցուցած ըլլալին զանոնք մարդոց հոգիներուն մեջ: Ոչինչ ավելի տառապեցուցած

է հայ ժողովուրդը քան դավանական պայքարը: Շատ ավելի պաղաբեր կը լլար երկունքի դարը առանց այդ կոհիներուն:

Դավանական վեճերը ավելի բուռն թափ պիտի ստանային սակայն Ղափանցին հետո: Կավերաթուղթերուն մեջ, զորս թուրք պատմագիր Աշմեղ Ռեֆիկ լույս ընծայեց հին դարերու Պոլսու կյանքին պատկերը տալու համար, կա սուլթան Մուսատաֆա Բ-ի ուշագրավ մեկ ֆերմանը, որ, Ֆերհուլի Պոլսու ժամանելն քիչ առաջ տրված, կապազ, թե ինչ համեմատություններ ստացած էր կաթողիկ միսիոնարներու գործունելիունը Պոլսու և դավանական մեջ, և ի՞նչքան գրգռություն ստեղծած էին կաթոլիկության հարուները լատին եկեղեցիները հաճախել ստիպելու անոնց փորձերը:

1697 մայիս 22—31 (1108 Զիլքադե 1—10) թվակիր այդ ֆերմանին մեջ սուլթանը կը սե.

«Հրաման կարձակի Պոլսու քայլմաքամին և դատավորին, թե՝»

Սայրաքաղաքս բնակող հայերը կայսերական բանակատեղիս դիմելով ըսին, թե մինչ իրենք հին օրերե ի վեր իրենց սովոր եղած կրոնական ծեսին համեմատ կը նթանան, մայրաքաղաքիս բնակիչներն ԵԵՀթեմուրուլու Արկիր, Թութեր-օլլու Արիթու և Միհալմ-օլլու Կարապետ անուն անձերը, իրենց հին ծեսը թողած, պապին ազգության կավատկանին և այդ բանին կդրդեն որդիշներ ևս, ամուսնական և այլ ծեսերու հակառակ կշարժին, և այսպիսով խոռվությանց պատճառ կդառնան:

Ասկե առաջ հայտարարված էր, որ պապին պատկանող ֆրենկները Քիոս կողին մեջ այլազան դավաճանությանց և գրգռությանց տեղի կուտան, իսկ պապին կողմէ դրկված ինչ-ինչ հոգևորականներ, հանդերձանք փոխած; Կթափառին նահանգի նահանգ, հույն, հայ և ուրիշ քրիստոնյաներ կդրդեն իրենց հին դավանանքը լին և հարիլ ֆրենկ դավանանքին, և այս կերպով պատճառ կդառնան ոչ-իսլամ տարրերու մեջ խոռվությանց և ըմբռուսությանց, ինչ որ հակառակ ըլլարով արքայական կամքիս, հրովարտակ տոլլված էր Դամասկոսի կուտակալին և դատավորին, նույն նահանգին մեջ գտնվող դատավորներուն, գյուղերու սպաներուն, նահանգին երևելիներուն (այսն) և գործի մարդոց (իշ էր-լերի), որպեսզի եթե իրենց նահանգին մեջ կան ոչ-իսլամներ, տրոնք գրգռությանց հետեւանքով իրենց դավանանքեն ելած և պապին կրոնքին հարած են, խստիվ պատվիրվի այդպիսիներուն իրենց հին ծեսին դառնալ, այսուհետև նման գրգռությանց հանդինողները ձերքակալվին, որոնց նկատմամբ տնշրին և նվիրական օրենքին նախատեսած

պատիքը և այսպիսով վերջ տրվի անոնց գրգռությանց, միևնույն ժամանակ զգուշություն ըլլա, որպեսզի խաղաղ պարողները ոտնգությանց և կեղեքումի շենթարկվին:

Ինձմե խնդրված ըլլալով այժմ որպեսզի հրովարտակ մը ևս տամ հիշյալ նահանգին ուղղված ձևով և արձանագրությանց դիմված և հաստատված ըլլալով այդ հրովարտակին բովանդակությունը, ձեզ ևս կդրվի, որպեսզի շարժիք միևնույն կերպով»:

Հոգեբանական այսպիսի պահու մըն էր, որ կբացվեր դարը:

2. «ԵՐԿԱԹԵ ԳԻՄԱԿՈՎ ՄԱՐԴՅԵ»

Ընթերցողը թող մեզի ներին, եթե Շնորհաց 1964 թվականին ալ այս խորագիրը կուտանք հատվածի մը, որ պիտի բանա Պոլսու հայոց պատրիարք Ավետիք Եղիոլիացիին Նվիրված մեր քանի մը էջերը, այսինքն մարդու մը, որ բեմին վրա հայտնված դավանական վեճերու ամենն ավելի կրքու մեկ պահուն, երբ կաթոլիկ քարոզությունը հայ ժողովուրդի ծոցն էր միաժեկի իր ամենի թափը, կուգար հայ ավանդությանց պաշտպան կանգնելու, և իր այդ նախանձախնդրության մեջ, պահ մը կրքով կվարակվեր և ինքը, քափության նոխազ դառնալու համար ի վերջ ճիզվիտներու մոլեգնության:

«Երկաթե դիմակով մարդը» տիտղոսը տվին այս մարդուն, երբ կաթոլիկ հավատաքննությունը հաջողեր էր զայն խլել իր ժողովուրդի ծոցեն, և տանջարանի տանջարան անցնելե հետո զայն, հասցուցեր էր Բաստիլլ, ուր արքայական մենամոլությունն ու կրոնական անհանդուրդությունը կհամախմբեին այն ժամանակ գահուն և կրոնքին թշնամիները, անոնց կապը խզելով այլևս դուրսի աշխարժին հետո: »

Ավանդությունը կը սե, թե երկաթե դիմակ մը կանցնեին անոնք իրենց զոհերուն երեսը, որպեսզի անձանաշելի դարձնեն զանոնք իրենց շուրջիններուն ալ, և թե այն օրերուն, երբ հայոց պատրիարքը Բաստիլլ էին նետած իր թշնամիները, բռնապետության այս սե որչին մեջ երկաթե դիմակով մարդ մը արդարն կար: Ավանդությունը երկաթե այդ դիմակին տակ հայոց պատրիարքը ենթադրեց պահ: մը:

Եվ այդ օրեն ասդին ամբողջ գրականություն մը ստեղծվեցավ երկաթե դիմակով մարդուն շուրջ, ավելի քան հիսուն հատոր: Բոլորը կիործեին խորհրդավոր առեղծվածը լուծել: ո՞վ է ծածկված այդ դիմակին տակ: Ոչ միայն զայն իրենց նյութ ըրին վիապասանները ինչպես Ալեքսանդր Դյուման, այլ լուրջ պատմաբաններ ալ, ինչպես էր Միշլին, ա-

մենքն վարպետ ճիզվիտներեն սկսյալ, որպիսին էր Հ. Գրիֆե, մինչև լրջալուրջն Վոլտեր: Ոմանք պարզապես հերթեցին առասպելը, չկարենալով բուն դիմակավորը երևան հանել, ուրիշներ մոլորեցան ենթադրությանց և երևակայությանց բավիղին մեջ:

Ամենավերջին գրությունը, որ մեղ ծանոթ է, քրանսացի ակադեմական իրավաբան Հանրի Ռորերի ընդուրածակ մեկ հատվածն է, պատմության մեծ դատերուն նվիրած իր հատորներեն մեկուն մեջ⁵²⁰: Հեղինակը կիվերանի մը տասնյակ գեմքեր, որոնք նույնացված են առեղջաձային երկաթի դիմակով մարդուն հետ: Երկաթի դիմակով մարդոն ըլլալ կարծված են, օրինակ, Լուի ֆ�ի-ի եղայրը Ֆիլիպ, նույն թագավորին ենթադրյալ երկվորյակ մեկ եղայրը, ինչպես և Դը Վերմանդուա կոմսը, որ թագավորին ապօրեն մեկ զավակն էր, գեմքեր, զորս Լուի ֆ�ի իր թեշահ ուներ Բաստիլի մեջ լքացնելու անհնատ: Իրեւ երկաթի դիմակով մարդը կասկածված են նաև Խոփորի դուքսը, Սոնմութի դուքսը, համբավավոր Ֆուգեն, Ավստրիո Աննա թագուհին ապօրեն մեկ զավակը, զորս ունեցած էր Թուկինգամեն, Հայոց Ավետիք պատրիարքը, կարդինալ Մազարենի մեկ զավակը, երիտասարդ տղա մը, որ 13 տարեկանին հանդինած էր երգիծական երկու ուսանավորներ ծոնել ճիզվիտներուն, նույնիսկ Մոլիսո, որուն ճիզվիտները չեն ներած Տարտյութը գրած ըլլալուն համար, անգիտացի միլորդ մը, Բուկոնդ անուն քրանսացի զորավար մը, Լուի դը Օլդենդորֆ և Ռուստաշ Դանժե անուն ուրիշ երկու անձեր, Մանդուի Շարլ Դ դուքսին նախարար Ռուլ Մատթիուն, Շահարասի ապօրեն զավակը Ճաֆեր, և վերջապես Մարկիոլի անուն մեկը, որ հական հանվան կերևա բանտային արձանագրությանց մեջ:

Հստ քրանսացի ակադեմականին, միշտ է որ Բաստիլի բանտին մեջ արգելափակված են անձեր, որոնք թավիշի դիմակներ կրած են, բայց բոլորովին շինծու կդունե երկաթի դիմակով մարդու մը շուրջ հյուսված առասպելը, որուն հեղինակը կսեպէ նույնինքն Վոլտերը, որ իրեւ թե ինքն իսկ հերյուրած է զայն, ավելի ևս մոռայլ ցույց տալու համար արքայական ուժիմը և անոր զոհերը՝ ավելի դժբախտ:

Եթէ այնուամենայնիվ «Երկաթի դիմակով մարդը» խորագիրը տվինք մեր այս համածին, անոր համար էր, որ այդ խորագիրը մարդոց մաքին մեջ միշտ պիտի հիշեցնե Բաստիլը և հավատաքննության օրերը, զորս

ան կխորհրդանշե և որոնց զոհն եղավ պատրիարք մը, իր ունեցած և շունեցած մեղքերը քավելու համար անոր մոռայլ պատերեն ներս՝ Արև-Արքային հովանիին տակ:

Բացի ժամանակակից աղբյուրներու մեջ մեզ ավանդվածեն, մեր պատմությունը շատ քիշ բան գիտեր այն դժնդակ շրջանին մասին, որ Ֆերիոլի գեսպանության օրերն եղան Պոլսու մեջ: Եվ ինչ որ գիտեր, լեցուն էր խեղաթյուրումներով, ինչպես որ առհասարակ բոլոր տեղեկությունները, որոնք կաթոլիկ խողովակով հասած են մեզի այդ օրերուն մասին, և, ավաղ, դեռ ուրիշ շատ օրերու մասին, երբ կաթոլիկ պրոպագանդը եկած է հայ կյանքը խոռվել՝ պատմության առջև սրբանալու համար այդ պատմությունը խեղաթյուրելով:

ԺԸ դարու առաջին տասնամյակներու Պոլսու անցքերուն մասին ցանցառ են ժամանակակից հայ աղբյուրները: Պետք է գոհանանք ձեռագիրներու հիշատակարաններով և տեղեկությանց այն փշտանքներով, զորս ժամանակ մեզ կհրամցնեն Վենետիկի Միխիթարյանները, անոնց աղբյուրն անգամ հաճախ մեզմե ծածուկ պահելով կամ պարագային համեմատ անխնա կտրատելով իրենց կատարած մէջքերումները:

Թուրք աղբյուրներն շատ բան սպասել պետք է: այսուհանդերձ այդ օրերեն կարգ մը ֆերմաններ հասած են մեզի, որոնք պաշտոնական շրջանակներու շահագրգոռությունը կլուսարաննեն գեթ: իսկ թուրք պատմիչները արեւլան երկակայությունը միշտ խառնած են իրենց արձանագրած փաստերուն:

Օտար ճամբրոգներ այդ օրերուն շատ շկան, և եղածներն ալ շատ ժլատ են մեր մասին: բացառությունը է անոնցմե մեկը, որ ավելի առատաձեռն է տված իր տեղեկությանց մեջ⁵²¹:

Ճիշտ է, որ Ավետիք պատրիարքի շրջանը մեզ լուսաբանելու համար մեղ օգնության հասավ նաև իր հսկ ձգած ինքնակենսագրությունը: Այս ինքնակենսագրությունը շատ մը դեպքեր և թվականներ կճշտե անշուշտ և մեղ կպարզ ռաճանապարհ խաշի»-ն, ուրիշ անցավ Ավետիք եվդոկիացին իր առևանգումնեն մինչև իր անփառունակ վախճանը: Բայց մարդ ստիպված է հաճախ կասկածիլ այդ ինքնակենսագրության մեջ պատմված դեպքերուն վրա Գրված պահու մը, երբ իր հոգեկան առամաղբությունները արգեն լրիվ քայլարկած էին կաթոլիկ հավատաքննության թաթին տակ և երբ ամեն զոհողության ստիպված էր հանձնառու ըլլալ արևու լույսին

⁵²⁰ Henri Robert, „Des grands procès de l'histoire“, Paris, 1925, p. 87—122,

⁵²¹ La Matraye, „Voyage en Europe, Asie et Afrique“, La Haye, 1727.

ելլելու համար, գոնե կյանքին վերջին օրերուն, կարելի չէ հավատալ անկեղծությանը ու իր գարձին, ոչ ալ իր ինքնակենսագրության մեջ տեղ-տեղ սպրած բռնազրուիկ արտահայտություններուն:

Ավետիքի ինքնակենսագրությունն ու հեշտակարանը հատուկ զննության նյութ դարձուց Մ. Բրուս Պետերբուրգի պատմական գիտությանց ընկերության առջև 1873-ին ներկայացուցած իր զույգ մը զեկուցումներով⁵²², ուր բրանսսերնի վերածած էր Ավետիքի գրությունները: Անոնք նյութ եղան և այդ շրջանով զրադող հայ բանակերներուն, շատ բան փոխելով արդեն գիտցվածներնեն:

Նույն այդ սարիներուն էր, որ լույս տեսաս երեք կարևոր գրքեր, որոնք եկան լուսաբանելու շրջան մը, զոր կաթոլիկ աղբյուրների կճանչնայինք լոկ: Նախ լույս տեսավ 1870-ին Մարիուս Տոպինի գիրքը «Երկաթի դիմակով մարդ»-ում մասին⁵²³ և նույն տարին Վարենբերգի լույս ընծայեց Ֆերիուի թղթակցությունները⁵²⁴: Տասնյակ մը տարի հետո էր, որ Ռավեսոն պիտի հրատարակեր թաստիլի արխիվը⁵²⁵, երեք երկեր, որոնք գիրար կլրացնեին, փաստերու հեղեղին տակ լուսաբանելու համար Հայ Եկեղեցվոր ժմեկ պահը:

Մարիուս Տորինի գիրքը մասնականդ կոչված էր Ավետիք պատրիարքի ապրած բովանդակությունը պատմության հանձնելու և ան թարգմանվեցավ իսկույն հայերենի⁵²⁶, այնուհետև ատաղձ դասնալու համար բոլոր անոնց, որոնք զրադեցան ԺՈ դարու առաջին երկու տասնամյակներու գեպերով:

Տոպինի մեզի տված փաստերը բարերախտաբար ուժ ստացան ուրիշ աղբյուրների ալ, և Հայ Եկեղեցվոր մեծ պատմագիրը՝ Օրմանյան, առավելապես այդ փաստերուն կկոթնի, քայլ առ քայլ հետևելու համար Ավետիք պատրիարքի ալեկոծ կյանքին և Ֆերիուի գործած շահատակությանց, շենք գիտեր ինչու մատչելի եղած ըրլալով իրեն այն քանի մը յուս աղբյուրները, զորս հիշեցինք:

Տորինի փր գրքով, զոր «Երկաթի դիմակով մարդ» տիտղոսած է, այնուամենայինիվ

⁵²² M. Brosset, I. „Le prétendu Masque de fer arménien, ou autobiographie d'Avétilik, patriarche de Constantinople, avec pièces justificatives officielles, II „Histoire diplomatique du patriarche arménien Avétilik de Constantinople..

⁵²³ M. Topin, „L'homme en masque de fer“, Paris, 1870.

⁵²⁴ Varenberg, „Correspondance du marquis de Ferriol“, Anvers, 1870.

⁵²⁵ Ravaission, „Archive de la Bastille“, 1886.

⁵²⁶ Մարիուս Տորին, «Երկաթի դիմակով մարդ», Կարապետ Ռիտուան, Կ. Պոլիս, 1890:

թանկագին ուղեցույց մըն է բոլորիս համար, որպեսզի ձանշանք խաչի այն դժնակ ձամբան, ուրկե քալեց Ավետիք Գողգոթա հասնելու համար:

Ավետիք Եկեղեցվոր Հայ Եկեղեցվոր պատմության մեջ այլևս սոսկ դեմք մը չէ: Ան կիորհիդանշե ամբողջ շրջան մը՝ շրջանը քրիստոնյա Եկեղեցվոր մը արշավանքին ուրիշ Եկեղեցվոր մը սեմեն ներս, և փոքր ժողովուրդի մը խոլ մաքառումին՝ իր պապերուն հավատքը պահելու համար: Պատմությունը թերևս օր մը բնավ Հիշե մեղքերը, զորս ժամանակակիցները կվերագրեն Եկեղեցվոր պատմակիցին, և հանձին անոր, սերունդներուն փոխանցեց դեմք մը լոկ, զոր կաթողիկ հավատաքննությունը խլեց Հայ Եկեղեցվոր ծոցեն, զայն դիակի վերածելու և այդ դիակը շահագործելու համար օր մը:

3. ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎԻՆ ԿԱԹՈԼԻԿԻ ԳՐՈՂԻՆ ԱՌԶԵՎ

ԺՈ դարուն բոլորովին նոր կերպարանք ստացեր էր կաթողիկ գրոհը: Նախորդ դարուն հաջողած կորիգ մը կազմել հայ ժողովուրդի ծոցին մեջ, հիմա կիորդեր ամրացնել շահճած դիրքերը:

Ճիզվիտներն էին, որոնք այս դարուն ևս կղեկավարեին կաթողիկ գրոհը, այժմ տարրեր գործելու եղանակ որդեգրած քան նախորդ դարուն: Դեմ էին անոնք, առանց այլայլի, որևէ հասկացողության հերձվածող հայերուն հետ: Կոթնած Հոռմեն ստացած իրենց հրահանգներուն, անգիտող մնացին միշտ անոնք, և խափանեցին հասկացողության ամեն փորձ:

Ճիզվիտներն էին հետևաբար, որ ամեն միշոց փորձեցին արդիւելու համար հայ կաթողիկներուն Հայ Եկեղեցի հաճախել: Անոնք դեմ եղան նաև, որ հայ կաթողիկները իրենց սեփական աղոթատեղիներն ունենան: Հստ անոնց, շերմեռանդ կաթողիկ մը լատին Եկեղեցին միայն պետք էր հաճախեր և անդրդվելի մնացին իրենց այդ տեսակետին մեջ:

Կաթողիկ գրոհին նոր շրջանը այն տարին են, երբ Պոլիսը խռովեցին հայ կաթողիկներու ծիսակատարությանց շուրջ հարուցած վեճերը, որոնք նվազ բռուն շեղան մարդուրսներու փորձերն հայ ժողովուրդի ծոցը թափանցելու համար:

Քելին ԺՈ դարուն Պոլիս գործող ճիզվիտներուն մեջ կմատնաշե մասնակորապես հայր Ժակ Կազո անունով մեկը, որ «հայոց հայր» տիտղոսին հետ մեկտեղ կյանք նաև սատրուկներու հայրը մակոֆիրը: «Ան էր, որ Աստումեն բացառիկ տաղանդ ստացած էր հայոց ազգը փրկելու: Միմիայն 1712 տարվան մեջ մոտ 400 հերձվածողներ փրկեց և միայն ինքը 3 000 հոգի հոստովանեցուց: Հաջորդ տարին, 1713-ին, դափանափոխ եղող հերձվածողնե-

րուն թիվը կրկինը եղավ: Նույն այս հայր Կաշոն էր, որ ներշնչեց Մխիթարի և ուրիշներուն՝ Համախմբվիլ միակ կազմակերպության մը մեջ, միակ կանոնադրության մը տակ, որ իր հեղինակությունն էր գոնե մեծ մասամբ, և նպաստեց այս կերպով Մխիթարյան միարանության հիմնարկմանը⁵²⁷:

Կաթոլիկ գրոհին դիմագրավելու համար Հայ Եկեղեցին անպատճառ էր Եղեր Ժէ դարուն: Դեռ անկարող թափանցելու վտանգին, որ այդ գրոհը Հայ ժողովուրդին կապառնար, Հայ Հոգմորականությունը չէր կրցած Թումբ կանգնել գրոհին առջև և թողուցեր էր, որ կաթոլիկ քարոզությունը տակավ հող շահի Հայ ժողովուրդի ծոցին մեջ: Ավելին, այդ քարոզությունը իսայծերով էր Եղեր և պատրանքներով օրորեր Հայ Հոգմորականության ու Հայ ժողովուրդի միամտությունը: Մարդուսները Հայ ժողովուրդին կուգային Ավետյալ Երկրի բոլոր քարիքները խոստանալով, և շկա ավելի զորավոր հուռութք տառապող ժողովուրդներուն Համար, քան սպեղանի խոստանալ անոր ցավերուն: Ճիշտ այդ սպեղանին էր, որ խոստացեր էին Հոռմի գործականները:

Բոլորովին տարբեր էր արգեն Ժէ դարը: Հայ Հոգմորականությունը սթափած ըլլալ կթվեր երբեմնի իր պատրանքներն Խայծերը ստուգ չին տվեր և ոչ ալ Հայ ժողովուրդի դատը շահներ էր բան մը: Ասկե զատ, Հոռմի գործականներուն նոր ուզմավարությունը ամեն զնով զգեսնելու համար Հայ ժողովուրդը իր հավատքին մեջ, ինքնապաշտպանության տեսակ մը բնազդ ծավալեր էր Հայ Հոգմորականության շարքերն ներս: Հայ Հոգմորականությունը կսկսեր իր կոչումին դիտակցիլ և ավելի շերմորեն զուրգուրալ ավանդությանց վրա, որոնց պաշտպանության հոգը կզգար այլևս որ իրեն է միայն հանձնըքած: Այնպես որ Ժէ դարուն Հայ Եկեղեցին ավելի ամուր մնաց կաթոլիկ գրոհին առջև: Անշուշտ տատամումներ ունեցավ նաև այս դարը և կաթոլիկ քարոզությունը որսեր քաղեց Հայ Հոգմորականության շարքերն:

Մայր Աթոռը այս դարուն ավելի անհողդող մնաց կաթոլիկ պրոպագանդին առջև, քան Եղեր էր դար մը առաջ: Եվ արդեն անշատ ալ թիրախ շգարձալ լատին քարոզիչներու գրոհին: Այնպես որ այլևս չենք հանդիպիր այնպիսի կաթողիկոսներու, որոնք ընդառաջ դացած ըլլան պապական աթոռին, ինչպես որ եղան նախորդ դարերուն, երբ դեռ այն միամտությունը կար, թե Հայ ժողովուրդին բարիք կրնար գալ Հոռմի հետ մերձեցում մը:

⁵²⁷ Bellin, „Histoire de l'antiquité de Constantinople“, Paris, 1894, p. 267.

Այս դարուն ավելի ամուր մնաց նաև Պոլսո Աթոռը: Ճիշտ է, որ դարուն սկիզբը քանի մը դժույն դեմքեր նստեցան այդ Աթոռին վրա, ինչպես էին, օրինակ, Մելքիսեդեկ Սուրբին և Մխիթար Քուրդիստանցին, որոնք հաճոյակատար վարդունք ունեցան դեպի կաթողիկեները, անոնց առջև նույնիսկ բանալով Հայ Եկեղեցին բեր կայցլու բիմը: Բայց անոնք հեռու են դարը հատկանշելու: Իրենց անրաբիր վերաբերումը կաթողիկեներուն հանգեց անշուշտ որ զանոնք պահ մը հույսերով օրորեց և նույնիսկ հանդուն ալ դարձուց, բայց անոնք չկրցան ավանդություն ստեղծելու Հայ Եկեղեցին բեր դարձալ խլվեցավ դասալիքներեն և անոնք շշաջողցան այլևս Հայ Եկեղեցին հարվածել իր իսկ խորանին վրա:

Այս քարյացակամ պատրիարքներու կողմին, Պոլսո Աթոռը խստաբար դեմքեր ալ տվավ, որոնք կաթոլիկ գրոհին դեմ Հայ Եկեղեցին պաշտպանելու իրենց մտահոգությունը ծայրահեղությանց ալ տարին: Եփրեմ Ղափանցին և Ավետիք Եվգոլիացին աղոնցմեն եղան:

Ավետիքի առևանգումեն հետո, ցնծության պահ մը ապրեցավ կաթողիկ պրոպագանդը: Այնպես հուսաց ան, որ բերդը կբայքայվի տակավ: Այս անգամ ևս հաշվի չէր առած ան Հայ ժողովուրդը: Ինչ ալ եղած ըլլային Ավետիքի մեղքերը, Հայ զանգվածները, հանձին անոր, նահատակ մը ողբացին իսկույն: Իր թինամիները զայն խլած էին, անոր հետ Հայ Եկեղեցին ևս խորտակած ըլլալու հաճույքին համար: Ավետիք Բաստիլլ տարված էր, բայց ասդին կշարունակեին շնչել Հայ ավանդությունները կաթոլիկ պրոպագանդը անգամ մը ևս ձախողած էր:

Եվ այնուամենայնիվ շխաղաղեցավ Պոլսու, Ավետիքի շքացումեն հետո ալ:

Հինգ պատրիարքները, որ տասնամյակի մը ընթացքին Ավետիքի հաջորդեցին Պոլսո Աթոռին վրա, — Մարտիրոս Երդնկացի (1706), Միքայէլ Խարբերդցի (1706—1707), Սահակ Արուշենցի (1707 և 1708—1714), Հովհաննես Ջմյուռնացի (1707—1708) և Հովհաննես Գանձակեցի (1714—1715), — առավել կամ նվազ դժույն ափաբաներ եղան, բացի մեկնեն:

Անոնցմեն Հովհաննես Ջմյուռնացին էր միայն, որ իր կարճ պատրիարքության միջոցին տեր կանգնեցավ Եփրեմ Ղափանցի և Ավետիք Եվգոլիացի պատրիարքներու ավանդություններուն:

Կոմիտաս քահանայի նահատակությունը ամենն ողբերգականն եղավ այդ բոլորին մեջ, ան զոհն եղավ պարզապես դժբախտ մթնոլորտին, զոր ստեղծեր էր կաթոլիկ արշավանքը Պոլսո Հայության ծոցին մեջ:

Դժնդակ եղավ կրիվը, զոր Հայ Եկեղեցին մղեց այդ դարուն, պաշտպանելու համար իրեն։ Իր ազգագուն ուժերուն դեմ ճիզվիտները զրահված կուգային, և կուգային ամեն գնով հաղթելու ուխտով։ Միշոցներու միջև խտրություն շղնելու իրենց վաղեմի նշանաբանը պիտի կիրարկեին նաև Պոլսու մեջ։

Վանքերը, զորու կաթոլիկ միաբանությունները հաջողեր էին Պոլսու մեջ հիմնել, մելքմելի պատման էին կաթոլիկ պրոպագանդին համար։ Այնտեղին է, որ իրենց թույնը կտարածեին զանգվածներուն մեջ։ Ս. Թենուայի վանքը, օրինակ, այդպիսի ամրոց մը դարձավ Հռոմի գործակալներուն համար մեր նյութը կազմող դարուն։ Հռոմարակ եղած 1696-ին, հաջողեր էին զայն վերաշինել հաջորդ տարին իսկ։ «Այս նոր եկեղեցին, — կրսե կաթոլիկ շարժման պատմիչը, — իր գեղեցիկ օրերն ունեցավ, և հոն գործող հայրերը բարվուն կծառայեին փուլթեռանդն, բայց մանավանդ դարձի բերելու համար հերձվածող հայերը»⁵²⁸։

Հայր Տարիյոն 1712-ին կեղրոն ուղարկած իր տեղեկագրին մեջ կպարծենա։ ՇԿաթոլիկ դավանանքին բոլոր պարտականությունները կկատարենք այնպիսի կատարյալ ազատությամբ մը, որ իրեւ թե ամենաքրիստոնյա քաղաքներու մեջ ըլլայինք։ Ֆրանկ, հույն և Հայ երեք դավանանքների հավատացյալներու բազմություն մը անոնց հաճախին փոխնիփոխ։ Հայր Պորտիկ, մեր առաքելության մեծավորը, հաստատեց, ամեն երկուշարթի օրվան համար, երկու հրաշանանքումներ թուրք լիզով, մեկը առառուն, մայրավետերու, այսինքն Հայ կույսերու համար, որոնք Աստուծոն վիրաված են և իրենց ծնողքներուն մոտ խիստ քաշված և ապաշխարող կյանք մը կվարեն։ Երկրորդը, բանախոսությանց ձևով, երիտասարդ Հայ սարկավագներու և կիսասարկավագներու համար, որոնք կոչված են ավելի հետո քահանա կամ վարդապետ դառնալու»⁵²⁹։

Այս բոլորին դեմ շվարած էր Հայ Եկեղեցին։ Հեղեղը կեցնելու համար, խեղճ հայ պարիհարքներուն ուժերը բավական չէին։ Ոչ մեղմ միշոցները կըցեր էին կաթոլիկ արշավանքին թափը խորսակել, ոչ աւ իխսու։ Հաճախ նույնիսկ ծայրահեղ միշոցներով կարուի էր եղեր թումբ շարել հեղեղին առջև։

Անհրաժեշտ էր ճիզվիտ վենքերուն դեմ համապատասխան վենքերով կովիլ, փաստին դեմ փաստ ցուցնել, ու գրքերուն դեմ գրքերը հանել։ Եվ աղոր համար անհրաժեշտ էին

խոսքի ու գրչի ճարտարության տեր մարդիկ, իսկ Պոլսը աղոնցմե չուներ։ Պետք էր որ իրեն օգնության գալին վանքերը։

4. «ԶՈՒԽԱԿ ԱՄՐԴՈՂՑԻՆԵՐԸ»

Հայ ժողովուրդին համար ամրոց ու ապաստան եղան վանքերը անոր պատմության շատ մը գարերուն։ Երբ հայոց երկիրը, ոտքի կոխան դարձած բարբարոսներու, քարութանդ կըլլար, շվարած բազմությունները հաճախ որիշ տեղ չունեին ապաստանելու, բայց եթե վանքերու պարիսպներեն ներս։ Թշնամին հաճախ կանգ առավ վանքերու պատերուն առջև և համարձակեցավ սուրբերուն դպչիլ։ Ու հայ ժողովուրդը ուխտի վաղեց միշտ վանք, սուրբերուն ոտքը, ցավիերուն դարման մուրալու համար, իր սուգին՝ սփոփանք, բայց և տոնելու իր պահանդությունները։ Մատաղ տարավ սուրբերուն, բայց և դավուզ-զուլաւ ժողովուրդը ուխտի գիշերը։ Խոնակերու բուրքին խառնեց իր քեֆը, և մինչդեռ ներսը «Եկեղեց» կըլլար, ան ասդին կերգեր բոցերուն դեմք, Վանքերն էր որ փրկեցին Հայ ավանդությունները, ու ցավիերու մեջ գալարվող Հայ ժողովուրդը գինովցուցին այսպես տարին անգամ մը։ Բայց և Հայ ժողովուրդի հոգեկան գանձերը պահպանեցին վանքերը։ Անոնց նկուղներուն մեջ պահվելով է որ փրկեցան տասնյակ հազար հայերեն ձեռագիրները, որոնց ծոցին մեջ Հայ հոգին կպատմեր դարավոր իր ճիզը։ Ճիշտ է, որ անթիկ գումա-գործոցներ չքացան դարերու ընթացքին փիբենք պատսպարող վանքերուն հետ մեկտեղ, սակայն ինչ որ ճողոպարեցավ աղետներեն, դարձյալ մեծ մասամբ զայն վանքերուն կպարտինք։ Հայ ժողովուրդը վանքերուն կպարտի գինք իր նախնիքներուն կապող ոսկի թելերը, ու հպարտությունը, որով ան հրմա մարդոց կնայի, իր մագաղաթները անոնց ցուցը տված ժամանակ, և երբ դիմա անոնց զմայլանքը գոհարներուն առջև, զորս ստեղծած են հայոց որդան կարմիրն ու որդան կապույտը։

Հայոց վանքերը հաճախ եղան նաև տքնության բույներ։ Այնտեղ էր, որ մարդիկ, աշխարհը, դուրս մոռցած, ճմլեցին փրենց ուղեղն ու սիրտը, ճրագի մը վտիտ լուսին տակ։ Շատ վանքերու մեջ անշուշտ պորտ բուծանեցին վանականները, կամ աշխարհին կոնակ դարձուցած, ճգնելու զացին հաճախ անոնց մեջ։ Բայց նույն այդ վանքերուն պարտական է Հայ ժողովուրդը իր մտքին վաղքը դարերուն մեջն և անոր ստեղծած օվասինները զինք պարուրող անապատին մեջ, իր հոգվույն ճիզը, որ իր շարականներն ու մեղեղիներն ստեղծեց, Մեսրոպյան տառերն

⁵²⁸ Բիլին, հիշված աշխատությունը, էջ 264։

⁵²⁹ «Choix des lettres édifiantes», Paris, 1809, V, p. 25.

անմահացուց մագաղաթներուն վրա ու ծաղկեց զանոնք, այնպիսի զմայլելի ճաշակով մը, որ հազիվ կանձեր իր բմայքները: Հայ վարպետները հայ ոճն էին տվեր վանքին, հայ վանականը ի՞րը տվավ գույներուն և մեղիներուն:

Ու նույն այդ վանքերուն մեջ, մութ ու մուայլ խուցերուն ծոցը, հայ հոգին հորիզոն բացավ իրեն: Հայ վանականը հաճախ ձերբազատոց իր հոգին իր կապանքներեն ու փորձեց թափանցել բնության գաղտնիքներուն: Աշխարհի խորհրդավոր երկությներուն մերձենաչ համարձակեցավ ան, առաթուր ընելով հաճախ ավանդությունները, որ դինք կկաշկանդեին: Գործք առաքելոցին հետ Արիստոտելն ալ սերտեց, ու շվախցավ մեկնելու Ծննդոց գիրքը: Մարգարենները վերլուծած ժամանակի Պյութագորն ալ շմոռցավ, և Ավետարանի պատգամները մեկնարանելու միջոցին, ճգնեցավ աստղերու գաղտնիքն ալ լուծել: Զայն չգոյնացուցին Դավիթն ու Սողոմոնը իրենց անհուն իմաստությամբ, ու փորձեց ինք ևս մագաղաթին հանձնել ինչ որ իր միտքը կորողեր իր ճախրանքներեն: Մաղմու ու աղոթք չփսիսաց միայն իր խուցը քաշված, այլ խուրի և վեճի նստավ իր Արարշին հետ, Աստուծու Մայրը իր խուցը կանչեց և անոր բացավ իր հոգին, ու հորինեց տաղեր ալ, որոնց մեջ հոգեկան խոնճերու առընթեր, կրաքախեր և սիրտը:

Եվ այդ վանքերեն եկան հայ ժողովուրդին իր եկեղեցվոր գրեթե բոլոր կարկառուն ղեկավարները: Մարզած իրենց միտքը անոնց չորս պատերեն ներս, և թրծված այնտեղ հայ ավանդությանց բովին մեջ, գացին բազմի զանազան Աթոռներու վրա, այդ ավանդությանց պատնեշ փորձելով դարձնել զանոնք ալ: Հոգևորականներու հսկա թիվին քով, որոնք փոքրավորութենք հասան դիրքերու, միշտ փոքրավոր, հոգվով միշտ բորիկ մնացած, եղան ալ, որ հմտություն և հետեւաբար պատկառանք բերին վանքերեն: Սրբմ կրող անթիվ մարդոց քով, որոնք կկալազգեին կաթողիկ քարոզիչներուն առջև, վանքերը ղեմքեր ալ տվին, որոնք Բարսեղն ու Կյուրեղը սերտած, բայց և ծծած Տաթևացին և Շնորհալին, կհաջողեն ճակատի լատին աստվածաբաններեն մուրացված փաստերուն դիմաց: Թվով թեև դույզն, բայց այդպիսի մարդիկ տվին վանքերը:

Պոլիս դժբախտաբար շատ հեռու էր վանքերեն և շատ երկար ժամանակ վանքեր չունեցավ շուրջը: Արմաշը մտավոր բույն մը շեղավի սկզբան, և անցյալ դարսու սկիզբնեռն: Էր, որ անկե ղեմքեր սկսան գալ Պոլսու Աթոռին, փոկ մեր օրերուն էր միայն, որ անձվեցավ նոր առաքելության մը, որ հազիվ

քառորդ դար մը պիտի տեսեր: Պոլիսը, հետեւաբար, ամբողջ շորս դար, կարոտ եղավ վանքերուն, որոնք միշտ չէ որ օգնության կուգային իրեն: Պոլսու Աթոռը, ինչպես տեսանք, ասպարեզ ծառայեց հաճախ հասարակ բախտախնդիրներու, որոնք սեցուցին տագնապի դարը: Յանցառ եղավ, այդ դարուն, իրենց կոչման գիտակից հայ հոգևորականներու թիվը, և անոնցմե շատ քիչերը միայն եկան բազմի Պատրիարքական Աթոռի վրա:

Պոլիսը այսպես գտավ, ավաղ, նաև Ժի դարը: Կաթողիկ արշավանքին դիմագրավելու ընդունակ հոգևորականներու սովոր միշտ կար, իսկ Պատրիարքական Աթոռի վրա եղողները կամ տկարացան, կամ շփոթեցան այդ արշավանքին առջև, այսինքն բոլորն ալ ձախողեցան: Ոմանք ձախողեցան, որովհետև շատ հանդուրժող եղեր էին, ինչպես Մելքիսեդեկ և Միհիթար, ոմանք իրենց թուզ կեցվածքին համար, ինչպես Գալուստ և Ներսես, ոմանք ալ ձախողության, իրենց սովոր միաբաններուն իրենց թուզ կեցվածքին համար այս ձմյունացի պատրիարքները: Եվ այս ձախողությանց պատճառավ, դավանական վեճերը կշարունակեին հրահրված մնալ ու կազմալուծված պահել հայ կյանքը:

Ավելի բախտավոր չէր անդին ներուսաղեմը: Դարավոր վանք մըն էր նաև ան, իր բազմաթիվ տասնյակ միաբաններով: Բայց միշտ հոգ մը կշարունակեր մնալ ան հայ ժողովուրդին համար: Մեկ կողմեն ներքին վեճերը միաբանության ծոցին մեջ, մյուս կողմեն պայքարները Աթոռը իրարու ձեռքե խելու համար՝ վրդով կպահեին կյանքը Ս. Հակոբյան վանքին ներս: Այս դժնդակ կացությունը պետի ևս վատթար կդառնար այն հավակնությանց պատճառավ, զորս Պոլսու պատրիարքները կսուցանեին ներուսաղեմը իրենց ազգեցության տակ պահելու և երկու Աթոռներու հավասարապես պատրիարք դառնալու համար: Իրերու այս վիճակը չէր կրնար տագնապ շստեղծել վանքին մեջ և ասպարեզ շրանալ նաև աշխարհական բախտախնդիրներու շահատակությանց, որոնք ժամանակ առ ժամանակ ձեռք կառնեին վանքին ղեկը պապակամ վերի անուններուն տակ: Տագնապին բնական հետեւանքն այն էր եղեր, որ Ս. Հակոբ հեծերը պարտքերու տակ, իր սրբավայրերը աճուրդի հանվելու անմիջական վտանգին տակ:

Եվ ահա զավառի հեռավոր մեկ անկյունը կծկտած համեստ վանք մը օգնության հասավ զույգ Աթոռներուն, զույգ մը փրկարար դրկելով անոնց: Եվ արդարեն, նախախնամական դեր մը եկան կատարել, երկու Աթոռներուն մեջ հավասարապես, «զուխտակ ամրողլցիներ», ինչպես կանվանե Բարգեն վարդապետ

Կյուլեսերյան Ամրդոլի վանքեն այն զույգ մը հոգնորականները, որոնք տապանապներով լեցուն պահու մը հայտնվեցան հանկարծ Հայ Եկեղեցվու ծոցին մեջ, սփոփանքի քանի մը տասնյակ տարիներ պարգևելով անոր: Ջուխտակ այդ ամրդոլցիներն էին Հովհաննես Կոլոտ և Գրիգոր Շղթայակիր:

Ո՞ւր էր Ամրդոլ:

«Բաղեշի Արևմտյան անկյունը, Խոցերով՝ գետի գրեթե ափին վրա, կրարձրանա Ամրդոլ-գետի գրեթե ափին վրա, կրարձրանա Ամրդոլ-գովն անվան նվիրված փոքրիկ վանքը, իր գեղեցիկ տաճարով», — կար Բարգեն վարդապետ, որոշելով Ամրդոլի տեղը, Կոլոտի նվիրված իր ուսումնասիրության մեջ⁵³⁰:

Ու զավառի համեստ մեկ անկյունը ծվարած այդ համեստ վանքը նշանավոր պիտի դառնար Հայ Եկեղեցվու պատմության մեջ:

Ամրդոլի այդ վանքը կար վաղուց, իբրև հին զաստուն մը, բայց զայն ծաղկեցոց, ժամանակ վերշերը Բարսեղ վարդապետ, որ, սերած Սյունյաց դպրոցեն, սնած էր Տաթևացի հաջորդներուն շունչին տակ:

«Յորում ժամանակի էր յաջորդ և առաջնորդ, զետ և զլուխ վարդապետաց տեղույն այնմիկ ոմն վարդապետ Բարսեղ անուն, — կպատմե Դավորիթեցին, — որ էր այր երևելի և մեծանուն, և յոլով աշակերտաց տէր. և նոյն վանքն Ամրդոլու յառաջագոյն խրթին և յոփի շինեալ էր և այն ևս խարիսակալ էր ի հոնութենէ. սա զամենայն շինուածն միահաղոյն քակեաց, և ինքն վերստին հիմնարկեալ շինեաց և կատարեաց զբովանդակն, զեկեղեցին և զտներն և զալն, որ ի նոսաւ:

... Արդ՝ այս Բարսեղ վարդապետ յինքեն՝ իսկ գիտակ էր թէ, գիտութիւն արտաքին իմաստից և քերականութեան ո՛չ գոյ ի մէշ վարդապետացն Հայոց, և ինքն մեծաւ տարփանօք ըղձայր թերևս հասանել այնմ գիտութեան, ոչ միայն վասն իբր, այլ մանաւանդ վասն ազգին, որպէսդի ամեննեքեան հասցեն այնմ շնորհաց և գիտութեան»⁵³¹:

Դավորիթեցին կպատմե հետո, թէ Բարսեղ ինչպես տքնեցավ գրեթերու վրա՝ ծուծը քամելու համար Հիներու ավանդած իմաստությանց, պաշար հավաքեց իրեն և իր շուրջիններուն համար, և աշքերը փակելի առաջ նույն կտակն ըրավ իր հաջորդներուն, որպէսդի անոնք ևս պատվիրեն իրենց կարգին իրենց «աշակերտելոցն՝ զի այսմ օրինակի արացեն, և այսպէս յորդոց որդիւ»:

Սերմը ցանած էր ան Ամրդոլու մեջ, երբ 1615-ին բարնվեցավ աշխարհեն, բայց իր

ցանած այդ սերմը ապարդյուն չէր անցած: Ու կես դար հետո իրմեն, Ամրդոլու մեջ պիտի հայտնվեր պատկառելի դեմք մը, Վարդան Բաղեցեցին, որուն շունչին տակ էր, որ պիտի հասունալին Հովհաննես Կոլոտ ու Գրիգոր Շղթայակիր:

Լեռ, խոսելով այն մեծ ձիգին մասին, զոր Բարսեղ վարդապետ ըրավ «արտաքին գիտությանց» ուսումնասիրության համար, և թափանցելու համար հունաց փիլիսոփաներու երկերուն, կըսե, թի այսպիսով հաստափում էր Բաղեշի ինքնուրույն դպրոցը իրու անհամաժշտ լրացում հայ վերանորոգված դաստիարակության, որ մտցնում էր նրա մեջ գիտնականության ոգին: Այս լուսավոր գործը հրաշակի մի երևույթ է դառնում, երբ նկատի ենք առնում այն միջավայրը, ուր նա ծնվեց և զարգացավ: Բավական է հիշել, որ հայերը, նոյն այդ Բարսեղ վարդապետը և նրա դպրոցը գտնվում էին քրդական մի սանձարձակ թագավորության մեջ: Տիրապետողները ցեղային կյանքով ապրող վայրենի վաշկատուններ էին, զուրկ գրից և գրականությունից, իսկ նրանց ձեռքի տակ ձնշված ուայնները ժամանակ և հնարավորություն էին գտնում թի' իրենց ստրկական պարտականությունները կատարելու և թի' մինչև Արիստոտել, Պլատոն, մինչև դասական հելլենության բարձունքները, ձգտելու Բաղեշի դպրոցը հենց այս պատճառով ներկայանում է հայ ժողովրդի կուլտուրական հանճարի մի շատ թանկագին հուշարձանը»⁵³²:

Ու ոք պիտի կարենար, Կոլոտեն ավելի, այնքան կենդանի գույններով նկարագրել Ամրդոլու այդ վանքը այնպես, ինչպես ան կներկայանա ԺՈ դարու սկիզբը, և դերը, զոր Վարդան Բաղեցին ունեցեր էր անոր վերածալիման մեջ: Կոլոտ 1719-ին գրված հիշատակարանի մը մեջ, պատմելե առաջ պարզագուները, որոնց մեջ ինք և իր լծակից Գրիգոր վարդապետը, որ երուսաղեմի Շղթայակիր մեծ պատրիարքը պիտի դառնար հետագային, պիտի ստիպվեին Ամրդոլու վանքը թողու 1706-ին, մահեն քիչ հետո իրենց ականավոր ուսուցիչ Վարդանի, որ վախճաներ էր տարի մը առաջ, կըրե, Ճիթութեամբն Աստոծոյ մեր նուռաստ ծառայք նորա՝ Գրիգոր և Յովհաննէս սպասաւորք Սուլը Աւետարանին՝ զինի վախճանեցման երջանկաղարդի, ճնազգեցի, առաքինասիրի և առաքելաշաղի հօր մերոյ Տեառն Վարդանայ՝ աստուածաբանութեան բարունապետի և տիեզերայուր վարդապետի, հողմավարմամբ իրու եղեալ տարաքեցիկ՝ ի բնիկ գեղեցկաղարդ, արփիասարա, նշանաւոր, բարձրահամբաւ, մեծ հա-

⁵³⁰ Բարգեն ծայրագոյն վարդապետ Կյուլեսերյան, Կոլոտ Հովհաննես Պատրիարք, Վիեննա, 1904, էջ 1:

⁵³¹ Առաքել Դավորիթեցի, Վաղարշապատ, 1895,

էջ 390—391:

⁵³² Լեռ, «Հայոց պատճություն», Գ, էջ 276:

մալսարանէ մերմէ, որ է ի Զորբորդ մասիւ Հայոց ի գաւառին Խողձ, ի տեղին Սալնոչ ձոր, կերտեալ ի բղեշխացն Արծրունեաց, որ ածանցեալ կոչի Բաղէց:

Ի սոյն աստուածապահ՝ քաղաքիս շինեալ ի վիմածիլ բլրոց գագաթան՝ աստուածաբնակ ուխտ, երկնարատակ առագաստ, խորհրդարան խորան և շնորհարաշին տաճար՝ յանուն Հիանարաշ Սրբոյն Յովհաննու Կարապետին, սահմանաւորեալ արեգակնածագ կողմամբն զարմանահրաշ աղբերակօթ կարկաշահոսիր և ծաղկապանոյ փոքր պարտիզիս Խսկ յարմուտն՝ ծիծաղածաւալ երկարաշու, վիմարուղի յորդընթացի գետով և թիկնէթեկ հեղաքայլ առուիւ ոլորտախաղացեալ առ հարաւով, գեղաւորեալ ծառատնկօթ պաղաւէտիւր: Խսկ ի հիսխոյ առ մուտն արեւու և բարձրաբերծ տամբք քրիստոնէից՝ հաւատրեալ շիրմիւր հաւատացեալ ննչեցելոց:

Զոյն սուրբ վանքս մեծանուն, ի հիմանէ նորակերտեալ կրկին՝ սրբատաշ, կրամած, խաչակառ կաթուղիկիւ և րախատես բնակարանիւր, աշակերտական գրով և նոխ զարմանալի Վարդապետական պէսպէս մատենիւ, եկեղեցական զգեստիւր զարդարեալ պահեաց Տէր Վարդապետ, գերլնտիր հայրս մեր վերոգրեալ:

Եւ զի թէպէտ զո՞ն յայսմ տիրախնամ քաղաքին այլ վանորայք չքնազք և եկեղեցիք հոյակապք և գմբէթունիւր ծաղկեցեալը ի ձեռն բարեպաշտութեան միաբանից և կալգատրաց, որք ի մերոյս վերոյիշեցեալ վարժապետէն և որք յայլոց: ... Քանդի սա' է երեւիթ, գերազանց զասատուն և դամբարան մեծաքանչ բարունապետաց:

Որ և մեծաւ շնորհաւատութեամբ սրբոյ տաճարիս այսորիկ՝ սուրբ վարդապետն Բասիլ լուսահոգին Աղքակեցի՝ եզիա զգիտութիւն արտաքնոց զջափոյ և հաւաքեաց զաշակերտուլով՝ ուսուցանելով զիին կորուսեալ և զնորդուած զշենալ իմաստութիւն. և նորօք զոյն լուսահետ գիտութիւնս ի մէջ ամենայն ազգին մերոյ առսփոեաց, որպէս և վիպարանէ քաշացան պատմիչն մեր Առաքել վարդապետն:

Խսկ ի թուարերութեանս մերում, ԾճԾԴ (1705) ամին ելից տէր և ուսուցիչ հայրս մեր քաղցրաքարոզ և համեղարան զիւրոյ պանդիտութեան ժամանակն: ... Ուստի և հանգեաւ ի յոգնավիշտ աշխատութեանց, եթէ յայլասեսից և թէ ի մերայնոց ամբարտաւնից և գոռզակրօն ինքնանապենից: Որք նախանձէին ընդ բարեհոչակ, աշխարհալուր անուն նորին և ընդ քաջանշոյլ, լուսակրոն վարս նորա: Եւ մանաւանդ ընդ աղբիւսաւրաս, աստուածատուր բեմբասացութիւն, ուպէս և է՛ սովորութիւն բնականապէս և յայտնի բարձրայօնից մերոց:

Եւ յետ որոյ՝ վեհազն հովիս մերոյ առ Տէր զնալոյ, ցրւեալ ցրւեցան գառինք ողջամիտք...»⁵³³:

Ինչպես Բարսեղի, նույնպես և Վարդանի օրով Ամրդուլ մեկը հանդիսացավ հազվագելով մտքի օշախներին, որոնք դեռ կհամենային այդ գարուն, և ավելորդ է ըսել, որ ան ևս, մեր ուրիշ շատ մը վանքերուն պես, իր ծոցը կպատսպարեր հարուստ մատենադարան մը: Ամրդուլը շնչնող զույգ դեմքերը՝ Բարսեղ և Վարդան, չէին կրնար ամբարած ըրլալ հոն մաս մը հայ ժողովուրդի հոգեկան գանձեն և զարկ տված ըրլալ նոր երկերու ստեղծման: Նալյան կիշչե, թե Կարս, Պոլսո մեջ իր ստեղծած մտքի օշախը օժակելու համար անհրաժեշտ գրքերով, բերել տվալի իր պատրիարքության օրով Ամրդուլի հարուստ մատենադարանին կարևորագույն ձեռագիրներին անոնք, որոնք Պոլսո մեջ չէին գտնվեր, և ընդորինակել տալն հետո, ետ վերադարձուց զանոնք⁵³⁴:

Ավելցնենք, որ Ամրդուլի հոգեկան գանձեն կորիզ մը հասավ մինչև մեր օրերուն: Բարդեն վարդապետ, Մուշի իր առաջնորդության շրջանին, առիթը ունեցած է աշք անցնելու զանոնք: «Փամանակի հետ, տպիտության և շարաշահության հառաջ բերած վնասներն աղատված հոչակավոր մատենադարանի մը մնացորդները, զորս մեկիկ-մեկի աշքե և ձեռքե անցուցի, կցուցնեն ու կշեշտեն, թե ինչ ոգիով հոգնած, բրտնած և ծախսած է թաղիշեցին Վարդան, ա'յն «քաղցրաքարոզ և համեղարան» վարդապետը, որուն շնչովը սնած ու մեծցած են Կոլոտ և Շղթայակիր»⁵³⁵:

Բաղիշեցիի մահը ճակատագրական պիտի ըլլար սակայն Ամրդուլի համար:

«Վարդանին մահովը մահացավ Ամրդուլու գասատունն ալ, — կորե Բարդեն վարդապետ: — Զարաշունչ, նախանձարեկ կրոնավորներ կշշնեին արդեն և սրտի ցավ մը կդպային Վարդանի պէս լուսամիտ և առատ բեմբասացի մը ներկայութենէն: Կոլոտ և Շղթայակիր, երիտասարդ վարդապետներ, անհուն մորմորումով թողուցին «քարեհամրաւ և մեծ համալսարանը», որիշ տեղ գտնելու իրենց համար ասպնջական բույն մը, երբ արդեն մտքի և սրտի ընտիր պաշարով օժակված էին և վարդապետական կոչման հաշող կերպով պատրաստված: «Ուժգինն արցունքով թիկունք դարձուցին (1705-ին) Ամրդուլին Կոլոտ և Շղթայակիր, հոգեկից և

⁵³³ Բարդեն ծայրագույն վարդապետ, հիշված աշխատությունը, էջ 142—148:

⁵³⁴ Նալյան, «Գանձարան հատուցմանց», Գ, էջ 272:

⁵³⁵ Բարդեն ծայրագույն վարդապետ, հիշված աշխատությունը, էջ 3:

Հոգեկցորդ վարդապետները և ուրիշ վանքերու ու մենաստաններու այցելելի ետքը՝ իրենց շունչն առին Մշու Ս. Կարապետ՝ «Սրբոյն Գլահայ լուսաշեն» վանքը⁵³⁶:

Ամրդոլի տարագիրները կուզալին ծառայելու Մշո Սովորան Ս. Կարապետին; Շուտ պիտի շքանար սակայն զայն նոր Ամրդոլ մը դարձնելու իրենց երազը: Ահավոր երկրաշարժ մը, որ 1709-ին քարուքանդ ըրեր էր Հայոց աշխարհը, ավերեց նաև Ս. Կարապետը: Անհրաժեշտ էր զայն նորոգել, և այդ հոգը ստանձնեցին երկու Ամրդոլցիները՝ Գրիգոր վարդապետը, որ այդ պահուն վանքը կվարեր իրու առաջանորդ, և Կոլոտ Հովհաննեն վարդապետը, որ կործակցեր անոր: Նորոգությունը ահավոր պատրքերու ենթարկեց վանքը, և ստիպեց Գրիգոր վարդապետը, որպեսզի Պոլիս որկե Կոլոտը 1712-ին՝ հանգանակություն կատարելու համար ի նպաստ Ս. Կարապետի:

Կոլոտի ներկայությունը Պոլսու մեջ ճակատագրական դեր ունեցավ՝ Հայ Եկեղեցվու պատմության համար: Երիտասարդ վարդապետը, որ հազիվ 34 տարեկան էր այն ժամանակ, հմայեց Պոլսու ռուազին իսկ պահեն: Իր խոհական կեցվածքը և իր խոսքին դյութանքը զինքը սիրելի դարձուցին մեկն բոլոր խավերուն, և երբ Երուսաղեմի մեջ այդ պահուն տիրող տափնապը և գայթակությունները հարթելու համար անհրաժեշտ եղավ մեկը զրկել Ս. Հակոբ, օրվան պատրիարքը, որ արդիս Ապուչեացին էր, և Պոլսու հայ Երևելիները, ստիպեցին Կոյոտը, որ իսկույն Երուսաղեմ մեկնի իրը «աթոռակալ և վերիլ»:

Կոյոտ 1713-ին Երուսաղեմ հասավ և նախախնամական գեր կատարեց հոն: Աճուրդի դրվագ սրբավայրերն աղատեց և միջոցներ տնօրինեց պարտքերու հատուցման համար: Վանքն աղատված էր այլևս բախտախնդիրներն: Սովորան Մահմուդ, Երուսաղեմի փաշալին անեղեկազին վրա, «իսիլայեց երիտասարդ հայ վարդապետը»:

Երբ Կոյոտ Պոլիս դարձավ 1714-ին, ուրիշ անակնկալ մը կապասեր իրեն: Ազգը պահանջեց, որ ան Երուսաղեմը իր ուղածին թողու, և ինքն ստանձնեն Պոլսու պատրիարքությունը:

⁵³⁶ Թարգեն ծայրագույն վարդապետ, հիշված աշխատությունը, էջ 3-4:

Կոլոտի մերժումը օգուտ շունեցավ: Պոլսու հայ մահատեսիներն ու բոլոր երևելիները միշտ կպնդեին, ամեն խոստում ընելով: Հովհաննես Կոյոտ զիշանեցավ ի վերջո, և 1715 սեպտեմբեր 9-ին, դեռ 37 տարեկայ վարդապետ, նստավ Պոլսու Պատրիարքական Աթոռը:

Նորընտիր պատրիարքին առաջին գործն եղավ հաջորդ օրն իսկ պատարագ մատուցանել տալ Պոլսու Եկեղեցիներուն մեջ, իրեն Երուսաղեմի պատրիարք հիշատակել տալով Գրիգոր վարդապետը, որ Ս. Կարապետ ստած, լուր իսկ շոնէր բոլոր այս եղածներնեն:

Սովորանական հորվարտակով հաստատվել է հետո երկու պատրիարքներու պաշտոնը և վավերացվել է հետո նաև Աստվածատուր կաթողիկոսնեն, պաշտոնապես հաղորդվեցավ իրեն ալ: Դժվարությամբ ընդունեց ան իր վրա դրված այս բեռը և համակերպեցավ առավելապես Կոլոտի թախանձանքներուն վրա: 1717 օգոստոս 18-ին ան Պոլիս կմտներ իսանդավագու ցուցերու մեջ:

Ուշագրավ պահեր էին աղոնք Հայ Եկեղեցվու պատմության համար:

Ամրդոլ կնստեր Պոլսու և Երուսաղեմի զույգ Աթոռներուն վրա: Ու նոր թվական մը կրացվեր երկու Աթոռներուն համար ալ:

Վարդե Աթոռներ չէին որ ժառանգեցին երկու ամրդոլցիները:

Դավանական վեճերու պատճառավ ալեհոծված և քառսի վերածված Պատրիարքություն մըն էր որ կստանձներ Կոլոտ:

Գրիգոր վարդապետ պարտքերու բեռան տակ հյուծող և շահատակությանց ասպարել դարձած պատմական վանքի մը գլուխը կուտար ու շղթա մը կանցներ վզին, ուկտելով զայն հանել այն ժամանակ միայն, երբ Ս. Հակոբ աղատած ըլլար իր պատքերին ու հոգերեն:

Երկու պատրիարքները, ձեռք-ձեռքի տված, մեյմեկ նախախնամություն դարձան իրենց վստահված Աթոռներուն համար:

Հայ Եկեղեցվու պատմությունը պարծանքով արձանագրեց իր մեկ էջին մեջ «զուխտակ ամրդոլցիները»:

(Շարունակելի)